



«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
01.01.2016 - 30.06.2016թթ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎՏ)

Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Վ. Սարգսյան 10/110 հասցեում:

Ընկերության բաժնեմասերի 60%-ը պատկանում է Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Չորափի փողոց 72ա), 40%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բ և.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, Ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 30.06.2016թ-ի դրությամբ ընկերությունն ունի 4 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հստակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:

Ընկերությունը ՀՀ տարածքում ունի 1 մասնաճյուղ:

30.06.2016թ-ի դրությամբ Ընկերությունն ունի 458 ապահովագրական գործակալ և 169 աշխատակից:

Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է:

Ներկայացված գումարները կլորացված են հազար դրամով:

Ծանոթագրություն 3 . Հաշվապահական հաշվառման գնահատականներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով փոփոխման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա կամ փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում

Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադիրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադիրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադիրի վրա:

Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ուժի մեջ մտած ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ:

Վերաապահովագրական ակտիվներ

Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:

Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում: Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելի բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք: Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Հիմնական միջոցներ

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>Շենք-շինություններ</i>	<i>20 տարի</i>
<i>տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

Արտարժույթ

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփռո փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը)՝ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկեր ճանաչվում են կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազայի միջև եղած տարբերություններից:

Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

Հակերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք ճանաչված են՝ ա/ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բ/ ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են սեփական կապիտալում:

Քաժմնատոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ

Ընկերության սեփականատերերին բաշխումներ ճանաչված շահաբաժինների գումարը արտացոլվում է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքներ

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ներդրումները, պահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:

Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ՝ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացվող արժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները: Ընկերությունը օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցներ չունի:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:

Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով:

Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Պահուստներ

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանավատորեն գնահատել:

Ապահովագրական պահուստները ձևավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերի, ինչպես նաև ՖՀՄՄ 4-ի պահանջների համաձայն:

Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասհանումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները, ինչպես նաև ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը:

Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:

Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ, կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Ծանոթագրություն 5. Զուտ ապահովագրավճարներ

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր, որոնց գծով հավաքագրվել է ապահովագրավճար	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողների փոխանցված ապահովագրավճարներ	
	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	27,375	18,675	(192)	
Առողջության ապահովագրություն	747,015	537,469		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	152,110	161,687	(38,873)	(38,940)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	41,228	93,129	(32,450)	(50,485)
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	119,473	101,457	(42,052)	(110,254)
Ավտո պատասխանատվություն	4,253	3,213	(469)	(10)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	93,475	12,786	(7,666)	(5,573)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	688	8,884		(8,127)
Աջակցության ապահովագրություն	14,541	13,301		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,847,364	1,458,556		
ԱՄՆՆԱԿԱՆ	3,047,522	2,409,157	(121,701)	(213,389)

Ծանոթագրություն 6. Չվաստակած ապահովագրավճարի պահուստի փոփոխություն

Ապահովագրության դասեր	Համախառն փոփոխություն		Վերաապահովագրողների մասնաբաժնում փոփոխություն	
	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	235	2,301	86	
Առողջության ապահովագրություն	(104,105)	(83,811)	(2,597)	
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	16,869	5,590	(422)	(1,500)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(1,214)	1,067		3,009

Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	2,941	392	939	4,334
Ավտո պատասխանատվություն	1,455	(888)	28	(172)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(40,749)	12,667	(1,597)	(17,107)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	3,052	(6,302)	(3,362)	5,683
Աջակցության ապահովագրություն	995	2,181		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	(290,295)	(286,916)		
Ընդամենը	(410,816)	(353,719)	(6,926)	(5,753)

Ծանոթագրություն 7. Փոփոխություններ տեխնիկական պահուստներում

Ապահովագրության դասեր	Համախառն փոփոխություն		Վերաապահովագրողների մասնաբաժնի փոփոխություն	
	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(7,523)	6,330		
Առողջության ապահովագրություն	(73,731)	63,807		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(30,933)	5,467	18,158	(656)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	363	27,447	(200)	17
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	4,683	(151,013)	103	125,638
Ավտո պատասխանատվություն	6	191		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	49	3,245	282	(2,072)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	1,639	34,582		(34,496)
Աջակցության ապահովագրություն	6,448	(735)		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	(17,877)	15,045		
Ընդամենը	(116,877)	4,366	18,343	88,431

Ծանոթագրություն 8. Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամտի աղբյուրը	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Բանկերում ներդրված ավանդների, նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով	192,869	148,300
ՀՀ ոչ պետական արժեթղթերից	35	
Տրամադրված փոխառություններից	12,476	11,694
Այլ ներդրումներից	158	174
Ընդամենը	205,538	160,168

Ծանոթագրություն 9. Եկամուտներ միջնորդավճարներից

Ապահովագրության դաս	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	77	
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն		
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	12,050	6,947
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	15,297	11,414
Ավտո պատասխանատվություն	187	4
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	3,065	1,600
Ֆինանսական վնասների ապահովագրություն		1,219
Ընդամենը	30,676	21,184

Ծանոթագրություն 10. Այլ գործառնական եկամուտ

Հաշվեգրած եկամտի տեսակ	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Մուքրոգացիայի կիրառումից եկամուտ	49,076	36,192
Այլ գործառնական եկամուտ	3,641	4,609
Դադարեցման հետևանքով ստացվելիք վերաապահովագրավճարներ	2,722	2,412
Ընդամենը	55,439	43,213

Ծանոթագրություն 11. Այլ եկամուտ

Հաշվեգրած եկամտի տեսակ	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից	1,966	11,272
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների իրացումից զուտ եկամուտ		106
Ընդամենը	1,966	11,378

Ծանոթագրություն 12. Ջուտ հատուցումներ

Ապահովագրության դասեր, որոնց գծով վճարվել են հատուցումներ	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(316)			
Առողջության ապահովագրություն	(251,655)	(231,000)		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(45,386)	(79,764)	19,622	33,159
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(24)	(2,008)	21	
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(2,907)	(2,845)	131	996
Ավտո պատասխանատվություն		(91)		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն				
Ֆինանսական վնասների ապահովագրություն		(32,780)		40,667
Աջակցության ապահովագրություն	(749)	(1,056)		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր	(565,455)	(422,162)		
Ընդամենը	(866,491)	(771,706)	19,774	74,822

Ծանոթագրություն 13. Չեզրեցված ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Առաջնային միջնորդավճար	(520,362)	(362,185)
Երկրորդային միջնորդավճար	(1,203)	(2,561)
Ընդամենը	(521,565)	(364,746)

Ծանոթագրություն 14. Այլ գործառնական և վարչական ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	30.06.2016թ դրությամբ	30.06.2015թ դրությամբ
Դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ, ներառյալ հետ վերադարձվող ցեղենտի միջնորդավճարը	(109,845)	(62,297)
Վնասների կարգավորման և այլ ծախսեր	(27,398)	(16,474)
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, արձակուրդային պահուստի ձևավորման ծախս	(227,163)	(213,992)

Սոցիալական ապահովագրության գծով ծախսեր	(45)	
Գործուղման ծախսեր	(693)	(1,264)
<i>Ուսուցման ծախսեր</i>	(826)	(203)
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	(71,614)	(66,144)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	(1,699)	(1,241)
Առդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(31,988)	(27,200)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(3,887)	(8,901)
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(1,258)	(2,311)
Շենքի վերանորոգում, սպասարկում	(212)	(222)
<i>Կապ և հեռահաղորդակցություն</i>	(12,138)	(10,633)
Գրասենյակային, տնտեսական, չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն	(45,534)	(40,689)
Տոկոսային ծախսեր	(15,956)	(12,893)
Ընդամենը	(550,256)	(464,464)

Ծանոթագրություն 15. Այլ ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	30.06.2016թ. դրությամբ	30.06.2015թ. դրությամբ
Գովազդի գծով ծախսեր	(15,536)	(13,227)
Ներկայացուցչական ծախսեր	(2,874)	(4,539)
Անդամավճարներ, բարեգործություն	(60,843)	(22,063)
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվներ մաշվածություն	(34,945)	(41,167)
Տուգանքներ և այլ ծախսեր	(2,500)	(3,002)
Հիմնական միջոցների ,ոչ նյութական ակտիվների իրացումից զուտ ծախս, արժեզրկումից կարուստ		
Ֆինանսական ակտիվների օտարումից զուտ ծախս	(1,008)	(213)
Ընդամենը	(117, 706)	(84,211)

Ծանոթագրություն 16. Ծախսեր կապված շահութահարկի հետ.

Շահութահարկի գծով ծախսի /եկամտի/ խոշոր բաղադրիչներ	Ծախսի մեծությունը	
	30.06.2016թ. դրությամբ	30.06.2015թ. դրությամբ
Ընթացիկ հարկի գծով ծախս	(106,000)	(76,500)
Ընթացիկ հարկի գծով փոխհատուցում		
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	1,556	1,425
Հետաձգված հարկի գծով ծախս		(44)
Ընդամենը	(104,444)	(75,119)

Ծանոթագրություն 17. Հետաձգված ձեռքբերման ծախսեր և ապագա ժամանակաշրջանի ծախսեր

	30.06.2016թ. դրությամբ	31.12.2015թ. դրությամբ
Հետաձգված ձեռքբերման ծախսեր գործող ապահովագրության պայմանագրերի գծով	461,859	368,497
Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ուժի մեջ մտնող ապահովագրության պայմանագրերի գծով միջնորդավճարների ծախսեր	7,016	67,984
Ընդամենը	468,875	436,481

Ծանոթագրություն 18. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց. գծով կապիտալ ներդր.	Վարձ.հիմն. միջոց.գծով կապիտալ ներդր.	Ընդամենը
--	--------	-------------------------------	-----------------	-----------------------	---------------------------------	--------------------------------------	----------

Սկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	398,172	121,924	144,543	143,050			807,689
Ավելացում		2,358		1,005			3,363
Օտարում							
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	398,172	124,282	144,543	144,055			811,052
Ավելացում		2,844	4,000	3,538			10,382
Օտարում							
Վերագնահատում*							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	398,172	127,126	148,543	147,593			821,434

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	90,748	105,658	113,839	120,756			431,001
Ավելացում	4,980	3,806	2,769	5,140			16,695
Օտարում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	95,728	109,464	116,608	125,896			447,696
Ավելացում	4,979	3,842	2,860	4,964			16,645
Օտարում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	100,707	113,306	119,468	130,860			464,341

Զուտ հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	297,465	13,820	29,075	16,733			357,093
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	302,444	14,818	27,935	18,159			363,356

Ծանոթագրություն 19. Վաճառքի համար պահվող հիմնական միջոցներ

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	234,000						234,000
Վերագնահատում*	-						-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	234,000						234,000

Ծանոթագրություն 20. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալները.	Ընդամենը
--	-----------------------	--------------------------	-------------------------	---------------------------	---------------------------------------	----------

Մկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	24,511			8,280		32,791
Ավելացում	2,239					2,239
Օտարում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	26,750			8,280		35,030
Ավելացում	4,054					4,054
Օտարում	(435)					(435)
Վերագնահատում						

Վերագնահատումից մաշվածության ճգրտում					
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	30,369			8,280	38,649

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	15,766			7,993	23,759
Ավելացում	730			15	745
Օտարում					
Վերագնահատում					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	16,496			8,008	24,504
Ավելացում	847			14	861
Օտարում	(435)				(435)
Վերագնահատում					
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում					
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	16,908			8,022	24,930

Չուտ հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	13,461			258	13,719
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	10,254			272	10,526

Ծանոթագրություն 21. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթերի անվանական արժեք	0	0
ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթերի գծով տոկոսներ	0	0
Ընդամենը	0	0

Ծանոթագրություն 22. Դեբիտորական պարտքեր

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Սուբբոզացիայի հետևանքով առաջացած պարտքեր	33,804	42,558
Այլ պարտքեր	234	960
Հնարավոր կորուստների պահուստ	(5,037)	(10,246)
Ընդամենը	29,001	33,272

Ծանոթագրություն 23. Տրված կանխավճարներ

Ֆինանսական ակտիվի կատեգորիա	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Հատուցումների գծով	24,056	17,007
Գործակալներին տրված կանխավճարներ	37,976	42,302
Կանխավճարներ աշխատավարձի գծով	6,104	1,909
Այլ կանխավճարներ	35,169	32,725
Հնարավոր կորուստների պահուստ	(3,858)	(2,225)
Կանխավճարներ բյուջեին	64,543	2,394
Ընդամենը	163,990	94,112

Ծանոթագրություն 24. Պահանջներ բանկերի նկատմամբ

Ակտիվ	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ ավանդներ	2,898,582	2,642,832
Ավանդների գծով հաշվեգրված տոկոսների մնացորդ	92,317	87,482

Հնարավոր կորուստների պահուստ	(29,909)	(27,303)
Բանկի արժեկտրոնային պարտատոմս	954	968
Ընդամենը	2,961,944	2,703,979

Ծանոթագրություն 25. Տրամադրված փոխառություններ

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ	296,500	296,500
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ	34,857	22,929
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	20,093	171,000
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ ի գծով ստացվելիք տոկոսներ	363	181
Հնարավոր կորուստների պահուստ	(145,782)	(39,569)
Ընդամենը	206,031	451,041

Ծանոթագրություն 26. Վերաապահովագրական ակտիվներ

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
ՉԱՊ	105,250	112,175
ՆՉՊՊ	25,540	7,197
Վերաապահովագրողից ստացվելիք միջնորդավճար	35,366	21,676
Վերաապահովագրողից ստացվելիք հատուցումներ	25,880	34,006
Դադարեցված պայմանագրերի գծով և վերաապահովագրողներից ստացվելիք այլ գումարներ	2,684	705
Հնարավոր կորուստների պահուստ	(1,947)	(1,758)
Ընդամենը	192,773	174,001

Ծանոթագրություն 27. Հետաձգված հարկային ակտիվ

Ընկերությունը հաշվեկշռում ճանաչել է **10,248 հազար դրամ** հետաձգված հարկային ակտիվ, որն առաջացել է աշխատակիցների հատուցումների գծով ձևավորված պարտավորությունների, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային և հարկային բազայի տարբերությունից:

Ծանոթագրություն 28. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Ապահովադիրներից ստացվելիք ապահովագրաճարներ	1,041,055	692,717
Ապահովադիրներից ստացվելիք այլ գումարներ	246	479
Ապահովագրական գործակալներից ստացվելիք ապահովագրաճարներ	407,299	442,887
Ապահովագրական գործակալներից ստացվելիք այլ գումարներ		
Ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարներ	860	853
Այլ անձանցից ստացվելիք գումարներ	605	422
Հնարավոր կորուստների պահուստ	(159,924)	(129,897)
Ընդամենը	1,290,141	1,007,461

Ծանոթագրություն 29. Դրամական միջոցներ և համարժեքներ

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Կանխիկ դրամ դրամարկղում	5,549	5,400
Կանխիկ դրամ ճանապարհին		49
Բանկային հաշիվներ բանկերում	70,047	92,407
Ընդամենը դրամական միջոցներ	75,596	97,856
Հնարավոր կորուստների պահուստ	(700)	(923)
Ընդամենը	74,896	96,933

Ծանոթագրություն 30. Այլ ակտիվներ

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Խիստ հաշվառման բլանկներ,	1,620	558
վառելիք,	208	721
պաշարներ	111	111
Ընդամենը	1,939	1,390

Ծանոթագրություն 31. Չվաստակաժ ապահովագրավճարի պահուստ

Ապահովագրության դաս	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	29,755	29,990
Առողջության ապահովագրություն	497,450	393,345
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	152,295	169,164
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	11,191	9,977
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	150,467	153,408
Ավտո պատասխանատվություն	4,437	5,892
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	112,250	71,501
Ֆինանսական վնասների ապահովագրություն	605	3,657
Աջակցության ապահովագրություն	6,805	7,800
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,321,265	1,030,970
Ընդամենը	2,286,520	1,875,705

Ծանոթագրություն 32. Պահանջների պահուստ

Ապահովագրության դաս	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	10,807	3,283
Առողջության ապահովագրություն	169,511	95,779
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	54,044	23,111
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	20	383
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	7,938	12,621
Ավտո պատասխանատվություն		6
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	10,002	10,051
Ֆինանսական վնասների ապահովագրություն		1,639
Աջակցության ապահովագրություն	528	6,976
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	218,789	200,913
Ընդամենը	471,639	354,762

Ծանոթագրություն 33. Այլ ապահովագրական պահուստներ

Ապահովագրության դաս	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	111,548	111,548
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	46,410	46,410
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	3,734	3,734
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	23,267	23,267
Ֆինանսական վնասների ապահովագրություն	347	347
Աջակցության ապահովագրություն		
Ընդամենը	185,306	185,306

Ծանոթագրություն 34. Ապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Հատուցումների գծով վճարվելիք գումարներ	18,891	37,651
Միջնորդներին վճարվելիք գումարներ	30,360	87,512

Ռեզիդենտ ապահովագրություններին հետ վերադարձվող ապահովագրավճարներ	17,900	10,115
Ընդամենը	67,151	135,278

Ծանոթագրություն 35. Կրեդիտորական պարտավորություններ վերաապահովագրության գծով

Պարտավորություն ըստ դասերի	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	73	74
Յամաքային տրանսպորտ	53,898	31,880
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	36,480	31,078
Ավտոմեք. պատասխանատվություն		363
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	52,337	22,358
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	7,881	7,434
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Միջնորդներին վճարվելիք գումարներ	700	468
Ընդամենը	151,369	93,655

Ծանոթագրություն 36. Ապահովագրության գծով ստացված գումարներ

Պարտավորության աղբյուր	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ կնքված ապահովագրության պայմանագրերի գծով	37,341	256,975
Ապահովագրության գծով գործակալներից ստացված կանխավճարներ	875	1,034
Ընդամենը	38,216	258,009

Ծանոթագրություն 37. Այլ պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Աշխատավարձ, հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	50,769	42,814
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	119,777	117,431
Ապահովագրողների բյուրոյի նկատմամբ	10,768	25,189
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների և ապրանքների դիմաց	20,661	21,387
Ստացված կանխավճարներ և այլ պարտավորություններ	120,382	27,857
Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ	25,900	23,810
Ընդամենը	348,257	258,488

Ծանոթագրություն 38. Ներգրավված վարկեր

	30.06.2016թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի մնացորդ	200,000	200,000
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի գծով տոկոսների մնացորդ	19,638	3,682
Ընդամենը	219,638	203,682

Ծանոթագրություն 39. Կապիտալ

30.06.2016թ.-ի դրությամբ Ընկերության հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1 290 000 հազար ՀՀ դրամ:

Գործադիր տնօրեն

Հովհաննես Գևորգյան

Գլխավոր հաշվապահ՝

Նադեժդա Գասպարյան